ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 11.06.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/48

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Մասնակցությամբ՝
Մասնակից՝ Ջանիկ Սևոյանի
Պատվիրատուի ներկայացուցիչներ՝ Խ. Աբաջյանի, Ա. Մկրտչյանի

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 18.04.2019թ. թիվ 26/26-1/6512-2019 գրությամբ «Ջանիկ Սևոյան» Ա/Ձ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>.**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի 25.03.2019թ. թիվ 05/136 գրության հիման վրա, 18.04.2019թ. «Ջանիկ Սևոյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի 25.03.2019թ. թիվ 05/136 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի պահանջով հայտնում եմ, որ ՀՀ ԳԱՄ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կարիքների համար սույն թվականի մարտի 5-ին հայտարարվել էր «ՓԱԲ-ԳՀԾՁԲ-19/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ՝ սարքերի կառավարման համակարգչային ծրագրային փաթեթների ներդրման ծառայությունների ձեռքբերման նպատակով: Նշված ընթացակարգի շրջանակներում Ա/Ձ Ջանիկ Սևոյանի կողմից ներկայացված հայտը «ՓԱԲ-ԳՀԾՁԲ-19/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2019 թվականի մարտի 21-ին կայացած գնահատման նիստում ընդունված որոշմամբ մերժվել է՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված, այն է՝ «3. Մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝ ... 2) մասնագիտական փորձառություն...», չափանիշին չհամապատասխանելու հիմքով, ինչը գնահատվել է Կարգի 61-րդ կետով սահմանված պահանջների համաձայն:»:

3. <u>«Ջանիկ Սևոյան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 30.05.2019թ. գրությամբ դիմել է «Ջանիկ Սևոյան» Ա/Ձ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.04.2019թ. թիվ 26/26-1/6512-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության գրավոր կարծիքը:

«Ջանիկ Սևոյան» Ա/Ձ-ն ներկայացնելով գրավոր դիրքորոշում, հայտնել է հետևյալը.

«ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կողմից «ՓԱԲ-ԳՀԾՁԲ-19/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի առումով սույն թվականի մարտի 25-ին ներկայացված բողոքի վերաբեյալ, հայտնում եմ, որ ըստ որակավորման չափանիշների մասով «ՓԱԲ-ԳՀԾՁԲ-19/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի ներկայացրած անհապատասխանությունների մասին արձանագրության N 3-ի՝ մարտի 20-ին ներկայացրել եմ փաստարկներ առ այն, որ «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ա/Ձ Ջանիկ Սևոյանի միջև 2018 թվականի հոկտեմբերի 16-ին կնքված «Վերլուծական կամ գիտական համակարգչային ծրագրային փաթեթի ներդրման ծառայությունների մատուցման գնման» N ՀՀՓԿ-ԳՀԾՁԲ-(18/1-Ծ) պայմանագրի ժամկետների անհապատասխանությունը պայմանավորված է ՀՀ Ֆինանսների նախարարի տեղակալ Կ. Բրուտյանի «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի 03.11.2018 թվականին ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված գրության պատասխանի ապասմամբ, և որը չի ազդել ծառայությունների փաստացի մատուցման ժամկետի փոփոխության վրա: «Հայաստանի Հանրապետության Փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ գրությունը եղել է 03.11.2018 թվականին, իսկ պատասխանը ստացվել է նոյեմբերի 16-ին:

Վերոնշյալից հետևում է, եթե պատասխանը ստացվեր Նոյեմբերի 4-ին, նման խնդիր չէր առաջանա, ինչո՞ւ, որովհետև իմ կողմից ծառայությունը մատուցվել է հոկտեմբերի 31-ին, կից Ներկայացնում եմ հոկտեմբերի 31-ին՝ ծառայությունն իմ կողմից մատուցված լինելու հանգամանքը փաստող հանձման-ընդունման ակտի պատճենը:

Ինչպես երևում է կից ներկայացված փաստերից ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ը, գրությամբ դիմել է «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ին, վերոնշյալ պայմանագրի մասին տեղեկատվություն ստանալու նպատակով: Ի պատասխան այդ գրության ներկայացվել է, որ մատակարարման ժամկետները 16 (օր) խախտելու համար հաշվարկվել է տույժ և ուղարկվել էր վճարման թիվ 537 հանձնարարականի պատճենը:

Այս մասով տեղեկացնում եմ, որ մատակարարման ժամկետներ խախտել նշանակում է, ստանձնած պարտավորությունները չկատարել սահմանված ժամկետներում, կամ կատարել թերի, սակայն կից ներկայացված հոկտեմբերի 31-ի՝ ծառայությունն իմ կողմից մատուցված լինելու հանգամանքը փաստող հանձման-ընդունման ակտի պատճենը (հավելված 2) փաստում է, որ մատակարարման ժամկետները չեն խախտվել: 16 օրը՝ փաստաթղթային առումով ուշացման արձանագրումը, առաջացել է, երբ «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ը սպասել է ՀՀ ֆինանսների նախարարություն ուղղված գրության պատասխանին (հավելված I):

Հիմք ընդունելով վերոնշյալը նշեմ, որ փաստաթղթերում առաջացած ծառայությունների մատուցման խախտված լինելը, չի նշանակում, որ ծառայությունը, մատուցվել է խախտմամբ, և պայմանագրի պատշաճ Կատարում նշանակում է սահմանված ժամկետում ծառայության մատուցում, ինչն էլ փաստվում է կից ներկայացված 2018 թվականի հոկտեմբերի 31-ին ծառայությունն իմ կողմից մատուցված լինելու հանգամանքը փաստող հանձման-ընդունման ակտի պատճենով, իսկ փաստաթղթերում, կրկնում եմ փաստաթղթերում առաջացած ժամանակային տարբերության պատճառը պայմանավորված է իմ իրավաբանական կարգավիճակի փոփոխման հանգամանքով, որի համար ՀՀ ֆինանսների նախարարություն «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի գրությունը հղել էր 03.11.2018 թվականին (նպատակը Ֆ/Ա-ի և Ա/Ձ-ի իրավահաջորդության հանգամանքի պարզումն է), իսկ պատասխանը ստացվել է նոյեմբերի 16-ին, ինչի պատճառով էլ տեղի էր ունեցել Համաձայնագրի (հավելված 3) ստորագրումը և ավարտական ակտի փաստաթղթային առումով վավերացումը:

Դե ֆակտո 2018 թվականի հոկտեմբերի 31-ին (հավելված 2) ծառայությունը մատուցված է եղել (պայմանագրի ավարտը նախատեսված էր 2018թ. ոոյեմբերի 5), դե յուրե այն վավերացվել է նոյեմբերի 21-ին:

Ուշադրություն պետք է դարձնել նաև Համաձայնագրի (հավելված 3)-ի 1-ին կետին, որտեղ նշված է, որ կողմերը գալիս են փոխադարձ համաձայնության՝ Պայմանագրում և պայմանագրի մաս կազմող հավելվածներում «Ֆ/Ա Ջանիկ Սևոյան» բառերը փոխել «Ա/Ձ Ջանիկ Սևոյան» բառերով:

2018 թվականի հոկտեմբերի 31-ին, ծառայությունն իմ կողմից մատուցված լինելու հանգամանքը փաստող հանձման-ընդունման ակտը հանդիսանում է պայմանագրի մաս կազմող հավելված:»:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրել է «Ջանիկ Սևոյան» Ա/Ձ-ին չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում:

4. <u>ՍՑ-LO-2019/48 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար սարքերի կառավարման համակարգչային ծրագրային փաթեթների ներդրման ծառայությունների ձեռքբերման նպատակով 2019թ. մարտի 5-ին հայտարարվել էր «ՓԱԲ-ԳՀԾՁԲ-19/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով 2019թ. մարտի 12-ի հայտ է ներկայացվել նաև «Ջանիկ Սևոյան» Ա/Ձ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.03.2019թ. թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Ջանիկ Սևոյան» Ա/Ձ-ն ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից:

Նույն արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել ծանուցել առաջին տեղը զբաղեցնող մասնակցին, առաջարկելով՝ ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

«Ջանիկ Սևոյան» Ա/Ձ-ն 15.03.2019թ. ներկայացրել է որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Պատվիրատուն սույն թվականի մարտի 18-ին դիմել էր «ՀՀ փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ին Ընկերության կողմից որպես նմանատիպ ներկայացված պայմանագրի մասին տեղեկատվություն ստանալու նպատակով:

«ՀՀ փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ը ներկայացրել է պայմանագրին վերաբերելի բոլոր փաստաթղթերի պատճենները: Միաժամանակ հայտնել է, որ մատակարարման ժամկետները 16 օր խախտելու համար հաշվարկվել է տույժ՝ ուղարկելով վճարման թիվ 573 հանձնարարականի պատճենը:

Գնահատող հանձնաժողովի 19.03.2019թ. թիվ 3 արձանագրության համաձայն՝ 1-ին տեղ զբաղեցրած «Ջանիկ Սևոյան» Ա/Ձ-ի կողմից սահմանված ժամկետում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացվել է որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, որով որպես նախկինում սահմանված ժամկետներում

պատշաճ կատարած նմանատիպ պայմանագիր ներկայացվել է «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի և «Ջանիկ Սևոյան» Ֆ/Ա-ի միջև 2018 թվականի հոկտեմբերի 16-ին կնքված «Վերլուծական կամ գիտական համակարգչային ծրագրային փաթեթի ներդրման ծառայություններ մատուցման գնման» թիվ «ՀՀՓԿ-ԳՀԾՁԲ-(18/1-Ծ)» պայմանագիրը:

Նույն արձանագրության համաձայն՝ որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված նախկինում կատարած նմանատիպ պայմանագրում և կից փաստաթղթերում արձանագրվել են անհամապատասխանություններ, որի արդյունքում որոշում է կայացվել մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և հրավերի 1-ին մասի 7.19 կետի համաձայն ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին, առաջարկելով տվյալ ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Գնահատող հանձնաժողովի 21.03.2019թ. թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ֆ/Ա Ջանիկ Սևոյանի միջև 2018 թվականի հոկտեմբերի 16-ին կնքված «Վերլուծական կամ գիտական համակարգչային ծրագրային փաթեթի ներդրման ծառայություններ մատուցման գնման» թիվ «ՀՓԿ-ԳՀԾՁԲ-(18/1-Ծ)» պայմանագրով նախատեսված ծառայությունն իր կողմից մատուցվել է սւսհմանված ժամկետում (պատշաճ)' չներկայացնելով դա հավաստող ակտ (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը կամ նախկինում կատարած այլ պայմանագրի (պայմանագրերի) պատճենները:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ գնահատող հանձնաժողովն որոշել է մերժել Մասնակցի հայտը:

Պատվիրատուն սույն թվականի ապրիլի 8-ին դիմել էր «ՀՀ փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ խնդրելով տալ պարզաբանում այն մասին, թե արդյոք պայմանագրի շրջանակներում ծառայությունն իրականում ամբողջությամբ և լիարժեք մատուցվել է 2018թ. հոկտեմբերի 31-ին, թե 2018թ. նոյեմբերի 21-ին, որի մասին է վկայում կազմված փաստաթղթերի ամբողջությունը և պայմանագրի արդյունքը պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ ակտը: Պատվիրատուն նաև խնդրել է պարզաբանել, եթե պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձման-ընդունման թիվ 1 արձանագրությունը երկկողմանի հաստատվել է 21.11.2018թ., ապա ինչո՞վ կարելի է բացատրել 31.10.2018թ. թվագրմամբ Ֆ/Ա Ջանիկ Սևոյանի և ՀՀ ԱՆ «ՀՀ փորձագիտական

կենտրոն» ՊՈԱԿ-ի միջև երկկողմանի հաստատմամբ պայմանագրի շրջանակներում ծառայությունը մատուցված լինելու վերաբերյալ փաստաթղթի առկայությունը:

Ի պատասխան վերոնշյալ՝ 08.04.2019թ. թիվ 05/188 գրության, «ՀՀ փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ը հայտնել է, որ «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կարիքների համար «Վերլուծական կամ գիտական համակարգչային ծրագրային փաթեթի ներդրման ծառայություններ»-ի ձեռքբերման նպատակով 28.09.2018թ.-ին հայտարարվել է ՀՀՓԿ-ԳՀԵՁԲ-(18/1-Ծ) ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով մրցույթ, որում հաղթող է ճանաչվել Ջանիկ Սեյրանի Սևոյանը (Այսուհետ նաև՝ Կատարող), ով ՀՀ պետական եկամուտների կոմիտեում գրանցված է եղել որպես ինքնուրույնաբար հարկ վճարող ֆիզիկական անձ (ՀՎՀՀ 37488172): Վերջինիս հետ 16.10.2018թ.-ին կնքվել է «Վերլուծական կամ գիտական համակարգչային ծրագրային փաթեթի ներդրման ծառայությունների մատուցման գնման» թիվ ՀՀՓԿ-ԳՀԾՁԲ-(18/1-Ծ) պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր): Պայմանագրի շրջանակներում Ջանիկ Սեյրանի Սևոյանը պարտավորվել է մինչև 05.11.2018թ. մատուցել պայմանագրով սահմանված ծառայությունը:

31.10.2018թ.-ին Ջանիկ Սեյրանի Սևոյանի և Պատվիրատուի միջև սկսվել է ծառայությունների հանձնման-ընդունման գործընթաց, կազմվել է արձանագրություն, որից հետո Ջանիկ Սեյրանի Սևոյանը որպես ինքնուրույնաբար հարկ վճարող ֆիզիկական անձ հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով պարտավոր էր դուրսգրել ծառայությունների մատուցման հաշիվ վավերագիր, ինչը հիմք պետք է հանդիսանար վճարումը կատարելու համար: Սակայն վերջինիս կողմից հաշիվ վավերագիր չի ներկայացվել և կազմված արձանագրությունն ըստ էության մնացել է անկատար, իսկ 02.11.2018թ.ին Ջանիկ Սեյրանի Սևոյանի կողմից Պատվիրատուին է ներկայացվել փաստաթուղթ, ըստ որի վերջինս ՀՀ պետական եկամուտների կոմիտեում վերագրանցվել է արդեն որպես անհատ ձեռնարկատեր նույն ՀՎՀՀ-ով (ՀՎՀՀ 37488172) և որ հաշիվ վավերագիր կարող է դուրս գրել հանդես գալով բացառապես որպես անհատ ձեռնարկատեր: Քանի որ այդպիսի վավերապայմաններով դուրսգրված հաշիվ վավերագիրը չէր կարող հիմք հանդիսանալ 31.10.2018թ.-ին կազմված արձանագրության հիման վրա հանձնման-ընդունման գործընթացը կազմակերպելու համար, ուստի անհրաժեշտություն է առաջացել արդեն որպես անհատ ձեռնարկատեր նոր հանձնման-ընդունման արձանագրության ներկայացման և հաշիվ վավերագրի դուրսգրման: Տվյալ գործընթացն ապահովելու համար պետք է համապատասխան փոփոխություն կատարվեր

նաև կնքված պայմանագրում, ինչի իրավասությունն ունենալու վերաբերյալ պարզաբանում ստանալու նպատակով Պատվիրատուն 03.11.2018թ.-ին դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը:

19.11.2018թ.-ին ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացվել է պատասխան գրություն, որի հիման վրա նույն օրը կողմերի միջև կնքվել է համաձայնագիր առ այն որ՝ «Պայմանագրում և պայմանագրի մաս կազմող հավելվածներում «Ֆ/Ա Ջանիկ Սևոյան» բառերը փոխել «Ա/Ձ Ջանիկ Սևոյան» բառերով»: Համաձայնագիրը ուժի մեջ է մտել ստորագրման պահից' 19.11.2018թ.-ին:

Կատարողը' 19.11.2018թ.-ին կնքված համաձայնագրի հիման վրա 21.11.2018թ.-ին արդեն որպես անհատ ձեռնարկատեր Պատվիրատուին է ներկայացրել հանձնման-ընդունման արձանագրություն, իսկ 26.11.2018թ-ին դուրս է գրվել հաշիվ-ապրանքագիր (վավերագիր)՝ 21.11.2018թ.-ի մատակարարման համար, և ծառայությունն ըստ էության համարվել է ամբողջությամբ մատուցված:

26.11.2018թ-ին Պատվիրատուի կողմից կատարվել է վճարում' ընդհանուր գումարից նվազեցնելով 16 ժամկետանց օրվա համար հաշվարկած 20240 (քսան հազար երկու հարյուր քառասուն) ՀՀ դրամ տույժը, քանի որ ծառայությունների մատուցման փաստը արձանագրվել է Կատարողի կողմից 21.11.2018թ.-ին ներկայացված հանձնման-ընդունման ակտով:

«Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի և «Ջանիկ Սևոյան» Ֆ/Ա-ի միջև 2018 թվականի հոկտեմբերի 16-ին կնքված «Վերլուծական կամ գիտական համակարգչային ծրագրային փաթեթի ներդրման ծառայություններ մատուցման գնման» թիվ «ՀՀՓԿ-ԳՀԾՁԲ-(18/1-Ծ)» պայմանագրի թիվ 1 հավելվածի համաձայն՝ ծառայությունների մատուցումն իրականացվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20-րդ օրացուցային օրվա ընթացքում /ավարտը 2018թ. նոյեմբերի 5-ը/:

Նույն պայմանագրի.

թիվ 2 հավելվածի /պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների/ հանձման-ընդունման արձանագրության համաձայն՝ պայմանագրով նախատեսված ծառայությունները ընդունվել են 2018թ. նոյեմբերի 21-ին:

թիվ 2.1 հավելվածի /պայմանագրի արդյունքը պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ/ ակտի համաձայն՝ պայմանագրով նախատեսված ծառայությունների վերաբերյալ հանձման-ընդունման արձանագրությունը ներկայացվել է 2018թ. նոյեմբերի 21-ին:

Հաշիվ վավերագրի համաձայն՝ ծառայությունների մատուցման հաշիվ է դուրս գրվել 2018թ. նոյեմբերի 21-ին:

Մասնակցի կողմից Բողոքներ քննող անձին ներկայացվել է Պայմանագրի թիվ 2 հավելվածով նախատեսված /պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների/ հանձման-ընդունման արձանագրությունը, որի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի և «Ջանիկ Սևոյան» Ֆ/Ա-ի միջև 31.10.2018թ. կնքվել է հանձման-ընդունման արձանագրություն, որտեղ առկա չէ պայմանագրի կատարման վերաբերյալ դուրս գրված որևէ հաշիվ ապրանքագիր, որը սակայն հաստատվել է կողմերի կողմից:

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ի պատասխան «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի 03.11.2018թ. թիվ Ե-0571-գ գրության, 16.11.2018թ. թիվ 01.1/27-1/21028-18 գրությամբ հայտնել է, որ անհրաժեշտ է ինքնուրույնաբար հարկ վճարող ֆիզիկական անձ Ջանիկ Սևոյանի տվյալները փոխարինել Ա/Ձ Ջանիկ Սևոյանի տվյալնելով:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.04.2019թ. թիվ 26/26-1/6512-2019 գրությամբ «Ջանիկ Սևոյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Արդեն նույն հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 46-րդ կետի համաձայն՝ սույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը

հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը…:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Հրավերի 2.5 կետի համաձայն՝

«Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատուցված ծառայությունների ծավալը գումարային արտահայտությամբ

պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում տրանսպորտային միջոցների համակարգչային ծրագրային ապահովման և սարքավորումների սպասարկման ծառայությունների մատուցված լինելը:

բ. սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին կներկայացնի նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

գ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները.

Վերոնշյալ նորմերի համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ մասնակիցների «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր:

Ընդ որում նախկինում կատարված պայմանագիրը գնահատվում է նմանատիպ, եթե դրա շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ Կարգի 61-րդ կետի դիսպոզիցիայից (բովանդակությունից) ուղղակի հետևում է, որ «նմանատիպ պայմանագիր» եզրույթն իրենից ներկայացնում է երեք կարևոր միաժամանակյա վավերապայմանների առկայություն, դրանք են՝

1. Պայմանագիրը պետք է կատարված լինի հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում,

2. Պետք է կատարված լինի պատշաճ ձևով,

3. Գումարային արտահայտությամբ, չպետք է պակաս լինի տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից և առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, չպետք է պակաս լինի տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

2. Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

3. Ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով

կամ պայմանագրով: **Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:**

Օրենսգրքի 420-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

2. Սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն' պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է

նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ՝

«ՓԱԲ-ԳՀԾՁԲ-19/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ 12.03.2019թ. թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Ջանիկ Սևոյան» Ա/Ձ-ն ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից:

«Ջանիկ Սևոյան» Ա/Ձ-ն 15.03.2019թ. ներկայացրել է որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը և որպես նախկինում սահմանված ժամկետներում պատշաճ կատարած նմանատիպ պայմանագիր ներկայացվել է «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի և «Ջանիկ Սևոյան» Ֆ/Ա-ի միջև 2018 թվականի հոկտեմբերի 16-ին կնքված «Վերլուծական կամ գիտական համակարգչային ծրագրային փաթեթի ներդրման ծառայություններ մատուցման գնման» թիվ «ՀՀՓԿ-ԳՀԾՁԲ-(18/1-Ծ)» պայմանագիրը:

Պայմանագրի թիվ 1 հավելվածի համաձայն՝ ծառայությունների մատուցումն իրականացվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20-րդ օրացուցային օրվա ընթացքում /ավարտը 2018թ. նոյեմբերի 5-ը/:

Մասնակցի կողմից ներկայացված Պայմանագրի թիվ 2 հավելվածով նախատեսված /պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների/ հանձման-ընդունման արձանագրության համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի և «Ջանիկ Սևոյան» Ֆ/Ա-ի միջև 31.10.2018թ. կնքվել է հանձման-ընդունման արձանագրություն:

Ֆ/Ա Ջանիկ Սևոյանի կարգավիճակի /ինքնուրույնաբար հարկ վճարող ֆիզիկական անձից որպես անհատ ձեռնարկատեր/ փոփոխություններով պայմանավորված, «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ը պարզաբանման խնդրանքով դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը:

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ի պատասխան «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի 03.11.2018թ. թիվ Ե-0571-գ գրության,

16.11.2018թ. թիվ 01.1/27-1/21028-18 գրությամբ հայտնել է, որ անհրաժեշտ է ինքնուրույնաբար հարկ վճարող ֆիզիկական անձ Ջանիկ Սևոյանի տվյալները փոխարինել Ա/Ձ Ջանիկ Սևոյանի տվյալներով:

«Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի և արդեն «Ջանիկ Սևոյան» Ա/Ձ-ի միջև պայմանագրով նախատեսված ծառայությունները ընդունվել են 2018թ. նոյեմբերի 21-ին, ինչպես նաև ծառայությունների մատուցման հաշիվ է դուրս գրել 2018թ. նոյեմբերի 21-ին:

Վերոնշյալի հետ կապված Բողոքներ քննող անձը հարկ է համարում անդրադառնալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի ու «Անհատ ձեռնարկատիրոջ մասին» ՀՀ օրենքի անհատ ձեռնարկատիրոջ վերաբերյալ առկա օրենսդրական կարգավորմանը:

Այսպիսով՝

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 26-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքացին, որպես անհատ ձեռնարկատեր գրանցվելու պահից, իրավունք ունի, առանց իրավաբանական անձ կազմավորելու, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ:

«Անհատ ձեռնարկատիրոջ մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ անհատ ձեռնարկատերն այն ֆիզիկական անձն է, որն իրավունք ունի, առանց իրավաբանական անձ կազմավորելու, ինքնուրույն, իր անունից և իր ռիսկով իրականացնել գործունեություն, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ (եկամուտ) ստանալն է:

Նույն օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ ֆիզիկական անձի, որպես անհատ ձեռնարկատիրոջ, իրավունակությունն ու գործունակությունը ծագում են նրա պետական հաշվառման պահից և դադարում են այդ ֆիզիկական անձի իրավունակության կամ գործունակության դադարման, ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքերում պետական հաշվառումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչվելու պահից:

Նույն օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձը կրում է պատասխանատվություն իր՝ որպես անհատ ձեռնարկատեր ստանձնած պարտավորությունների կատարման համար:

Վերոնշյալ հոդվածներից հետևում է, որ անհատ ձեռնարկատեր գրանցվելու պահից փոփոխվում է ֆիզիկական անձի իրավունակության բովանդակությունը: Այսինքն՝ այդ պահից ֆիզիկական անձը հնարավորություն է ստանում ունենալու այնպիսի իրավունքներ և

կրելու այնպիսի պարտականություններ, որոնք ոչ անհատ ձեռնարկատեր քաղաքացին չի կարող ունենալ կամ կրել:

Մինչդեռ քաղաքացին և անհատ ձեռնարկատերը պարտավորաիրավական հարաբերություններում հանդես են գալիս որպես նույն սուբյեկտը:

Հիմք ընդունելով վերոնշյալը, Բողոքներ քննող անձը գտնում է, որ Ֆ/Ա Ջանիկ Սևոյանի կարգավիճակի փոփոխությունները չպետք է հանգեցնեին «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի և «Ջանիկ Սևոյան» Ա/Ձ-ի միջև պայմանագրով նախատեսված ծառայությունները 2018թ. նոյեմբերի 21-ին ընդունելուն, ինչպես նաև ծառայությունների մատուցման հաշվի 2018թ. նոյեմբերի 21-ին դուրս գրվելուն՝ Ֆ/Ա-ից Ա/Ձ-ի կարգավիճակի փոփոխության հիմքով: Առավել ևս այն դեպքում, երբ «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի և «Ջանիկ Սևոյան» Ֆ/Ա-ի միջև 31.10.2018թ.-ին, թեկուզ առանց ծառայությունների մատուցման հաշվի դուրս գրման, արդեն կնքվել էր հանձման-ընդունման արձանագրություն, քանի որ, ինչպես վերը նշվեց, քաղաքացին և անհատ ձեռնարկատերը պարտավորաիրավական հարաբերություններում հանդես են գալիս որպես նույն սուբյեկտ:

Նման պայմաններում, Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Ջանիկ Սևոյան» Ա/Ձ-ի կողմից ձեռնարկվել են հնարավոր բոլոր գործողություններն՝ ուղղված գնումների գործընացին ստանձնած պարտավորությունների կատարմանը, սակայն իր կամքից անկախ հանգամանքներով պայմանավորված, հնարավոր չի եղել դրանք հասցնել տրամաբանական ավարտին:

Ամփոփելով վերոգրյալները, Բողոքներ քննող անձը փաստում է, որ սույն դեպքում պարտավորությունն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով՝ «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի (որպես պարտատեր) և «Ջանիկ Սևոյան» Ա/Ձ-ի (որպես պարտապան): Պարտատերը, թեկուզ անզգուշությամբ, սակայն իր գործողություններով նպաստել է պարտապանի կողմից ստանձնած պարտավորություններն անպատշաճ կատարելուն, ինչպես նաև ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, որի արդյունքում էլ հանգեցրել է «ՓԱԲ-ԳՀԾՁԲ-19/01» ծածկագրով գնման գործընթացին «Ջանիկ Սևոյան» Ա/Ձ-ի հետագա մասնակցության դադարեցմանը: Ուստի պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում

է այն եզրակացության, որ «Ջանիկ Սևոյան» Ա/Ձ-ի կողմից ստանձնած պարտավորությունն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել տեխնիկական խնդիրների, այն է՝ «Ջանիկ Սևոյան» Ֆ/Ա-ի՝ Ա/Ձ կարգավիճակի փոփոխության ու դրա որպես հետևանք «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից Ֆ/Ա-ի և Ա/Ձ-ի իրավահաջորդության հանգամանքի պարզման պատճառով: Նման պայմաններում պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու ընթացակարգը մերժելու միջոցով:

Ուստի նման պայմաններում, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.04.2019թ. թիվ 26/26-1/6512-2019 գրությամբ «Ջանիկ Սևոյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**